

Մամլո հաղորդագրություն

Ս.թ. ապրիլի 13-ին, ժամը՝ 12:00-ին Երևանի Օրհուս կենտրոնում /հասցե՝ Չարենց 46/ տեղի է ունենալու հանրային քննարկում՝ Գլխավորի բազմամետաղային հանքավայրի բացահանքի շահագործման աշխատանքային նախագծի ՇՄԱ հաշվետվությանը ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված բացասական եզրակացության վերաբերյալ:

Հարկ է նշել, որ 2016թ. դեկտեմբեր ամսին ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը բացասական եզրակացություն է տվել «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Գլխավորի բազմամետաղային հանքավայրի բացահանքի շահագործման աշխատանքային նախագծի ՇՄԱ հաշվետվությանը, որից հետո «Վայկ Մետալ» ՍՊԸ-ն վիճարկել է այդ որոշումը՝ դիմելով վարչական դատարան:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն վերջին տարիներին սա առաջին դեպքն է, երբ վիճարկվում է փորձաքննական բացասական եզրակացությունը, որը և առիթ է հանդիսացել մեկ սեղանի շուրջ հավաքելու շահագործող բոլոր կողմերին և քննարկելու ի՞նչ հնարավոր բացասական ազդեցություն կարող է ունենա հանքավայրի շահագործումը շրջակա միջավայրի վրա, արդյո՞ք նախագիծը հիմնավոր է մերժվել և ի՞նչ ակնկալիքներ ու սպասելիքներ ունի ձեռնարկող ընկերությունը վարչական դատարանից:

Գաղտնիք չէ, որ Հայաստանում ներկայումս բաց եղանակով շահագործվում են մի շարք մետաղական հանքավայրեր և անհերքելի է այն փաստը, որ դրանց շահագործման հետևանքերը անդառնալի ազդեցություններ են ունենում շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա:

Մեր տվյալների համաձայն հանքավայրի շահագործման ՇՄԱԳ նախագծին բացասական եզրակացության տրամադրումը ոչ հաճախ հանդիպող դեպքերից է, ուստի՝ այս փաստը ևս քննարկման առարկա է այն առումով, որ արդյո՞ք նմանատիպ հիմքերով հնարավոր չէր մերժել այն նախագծերը, որոնք ստացել են դրական փորձաքննական եզրակացություն:

Քննարկումը բաց է և սիրով բոլոր հետաքրքրվողներին հրավիրում ենք մասնակցելու:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Երևանի Օրհուս կենտրոն՝ 091 81 60 55, կամ գրել՝ info@aarhus.am, silvaa@list.ru հասցեներին:

